ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2016-4-3-Ա

ք. Երևան 02.05.2016թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2016 թվականի մայիսի 2-ի նիստում քննարկեց 2016 թվականի ապրիլի 13-ին արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված՝ Իքսնես Հոլդինգզ ՍիՈւայ Լիմիթիդ ընկերության (Siafi 1, Porto Bello, Flat/Office 401 CY-3042 Limassol) բողոքը «FX POKER» (IR1221765) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, 11-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 90-րդ կետի 2-րդ, 3-րդ ենթակետի և 96-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը չունի տարբերակիչ հատկություն և բացառապես բաղկացած է այնպիսի նիշերից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի և(կամ) ծառայության մատուցման տեսակը նշելու համար: Տվյալ դեպքում «FX POKER» նշանը չի կարող գրանցվել, քանի որ ապրանքային նշանը բացառապես բաղկացած է այնպիսի տարրերից, որոնք ենթակա չեն գրանցման, այն է՝ և “FX”-ը «FOREX» բառի հապավումն է, իսկ «FOREX» եւ “POKER” բառերը նշում են մեր օրերում շատ հայտնի և հետաքրքիր շահույթի ոլորտ, որտեղ շատ կարևորվում է գրագետ կապիտալի կառավարումը: Ապրանքային նշանը չի կարող բաղկացած լինել միայն այնպիսի տարրերից, որոնք ենթակա չեն գրանցման որպես առանձին ապրանքային նշաններ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն

ներկայացված ապրանքային նշանի մեջ մտնող երկու տարրերը հայտում նշված ծառայությունների համար չունեն տարբերակիչ հատկություն և այդ ծառայությունների համար ունեն նկարագրական բնույթ, ինչպես նաև ներկայացված նշանի գրանցումը կարող է սպառողին մոլորության մեջ գցել ծառայության բնույթի հարցում:

Բողոքարկողը ներկայացրեց իր տեսակետը, որ ներկայացված ապրանքային նշանը կարելի է գրանցել առանձին առանձին նրա տարրերին ինքնուրույն պահպանություն չընձեռելով:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ որոշումն իրավաչափ է և ներկայացված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված՝ «FX POKER» (IR1221765) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ